# Գիտության ոլորտում համագործակցության հիմնաքարը կդրվի

**Գայանե ԳԱՍՊԱՐՅԱՆ**

Արաբական Միացյալ էմիրությունների բարձրագույն խորհրդի անդամ, Շարժայի էմիր, շեյխ դոկտոր **Սուլթան բեն Մոհամմադ ալ Կասիմիի** գլխավորած պատվիրակությունը երեկ հյուրընկալվեց Երեւանի պետական համալսարանում, գիտությունների ազգային ակադեմիայում: ԵՊՀ ռեկտոր **Ռադիկ Մարտիրոսյանը** ներկայացրեց ԵՊՀ ստեղծման պատմությունը, գործունեությունը, տեղեկացրեց, որ Հայաստանում դարեր ի վեր գոյություն են ունեցել համալսարաններ, որոնք հսկայական նշանակություն են ունեցել երկրի գիտա-կրթական կյանքում:

Սուլթան բեն Մոհամմադ ալ Կասիմին արժանացավ ԵՊՀ բարձրագույն պարգեւի՝ ոսկե մեդալի:







Գիտությունների ազգային ակադեմիայում հանդիպման ժամանակ ԳԱԱ նախագահ **Ֆադեյ Սարգսյանը** տեղեկացրեց, որ Հայաստանում միշտ էլ մեծ ուշադրություն է հատկացվել գիտությանը, կրթությանը, մշակույթին. մեր ժողովրդի ամենակարեւոր ձեռքբերումները եղել են այդ ոլորտներում *«ԳԱԱ-ն համագործակցում է տարբեր երկրների գիտական կառույցների հետ: Առաջիկայում իրականացվելիք բազմաթիվ ծրագրեր ունենք: Մեզ համար շատ կարեւոր է, որ մոտ ապագայում կարողանանք համագործակցել նաեւ Շարժայի հետ»:*

Արեւելագիտության ինստիտուտի տնօրեն **Նիկոլայ Հովհաննիսյանը** պատմական ակնարկ կատարեց հայ եւ արաբ ժողովուրդների բարեկամության մասին եւ պատրաստակամություն հայտնեց ամեն ինչ անել իր ղեկավարած ինստիտուտի եւ էմիրությունների ինստիտուտներից կամ համալսարաններից մեկի միջեւ համագործակցություն ծավալելու համար:

ԱՄԷ-ում Հայաստանի դեսպան **Արշակ Փոլադյանը** վստահեցրեց, որ էմիրություններում, մասնավորապես Շարժայում, հայերը լավ են զգում իրենց: Նա շնորհակալություն հայտնեց Սուլթան բեն Մոհամմադ ալ Կասիմիին՝ հայերի համար բարեկեցիկ պայմաններ ապահովելու, ինչպես նաեւ հայկական եկեղեցի կառուցելու նպատակով հողատարածք տրամադրելու համար:

*«Մենք Հայաստանի մասին քիչ բան գիտեինք, այն, ինչ հնարավոր է իմանալ լրատվամիջոցներից: Երբ Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանն այցելեց Շարժա, բացեց ո՛չ միայն մեր աչքերը, այլեւ սիրտը»,*–խոստովանեց Սուլթան բեն Մոհամմադ ալ Կասիմին:

Ներկայացնելով իր ստեղծած համալսարանների պատմությունը՝ նա ԳԱԱ-ի հետ համագործակցության հիմքեր դնելու ցանկություն հայտնեց. *«Եթե մեր ձեռքը երկարացնենք ձեզ, համոզված եղեք, որ ցանկանում ենք ձեր ունեցածից մի մաս ստանալ, սովորել ձեզնից: Մենք ուզում ենք այդպիսի համագործակցություն ստեղծել եւ՝ մոտ ապագայում»:*

ԳԱԱ նախագահության որոշմամբ Սուլթան բեն Մոհամմադ ալ Կասիմիին շնորհվեց ԳԱԱ պատվավոր դոկտորի կոչում: